ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<22>> հունիս 2015 N 63

ք. Եղեգնաձոր

<<ՀՈՒՓՍԻՄԵ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱՋԵՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 81 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015Թ. ԱՊՐԻԼԻ 1- Ի N 32 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի, 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ա>> և <<ը>> ենթակետերի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 1-ին կետի պահանջի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Հուիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության 278 000 (երկու հարյուր յոթանասունութ հազար)

Հայաստանի Հանրապետության դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 277 999 (երկու հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր իննսունինը) Հայաստանի Հանրապետության դրամով՝ 277 999 (երկու հարյուր յոթանասունյոթ հազար ինը հարյուր իննսունինը) հասարակ (սովորական) բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով: Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցումից հետո կկազմի 1 Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1 հասարակ (սովորական) բաժնետոմս 1 Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 30-ի <<Մարզպետարանի ենթակա ՊՓԲԸ-ների վերագրանցման մասին>> N 81 որոշմամբ հաստատված <<Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2-րդ կետը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Հանձնարարել <<Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորի>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի՝ 2015թ. ապրիլի 1-ի <<<<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2000 թ. նոյեմբերի 30-ի թիվ 81 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> թիվ 32 որոշումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խաչիկ Գևորգյանին:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ 2015թ.

հունիսի 22-ի թիվ 63 որոշման

<<Հռիփսիմե գյուղական բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետ

<<4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է մեկ Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է մեկ հատ հասարակ (սովորական) բաժնետոմս՝ մեկ Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով :>> :

Աշխատակազմի ղեկավար **Կ. ՍԱՀԱԿՅԱՆ**